հետաքրքրուին. թող երթան Ջրնան գաբուր, հոն ուր որ շեհիզերի շիրմը այսինքն 89 Վայ կտրիճնորու գերեզմանը հաւատացեալներու հոգածութեան շնորհիւ նոյն իսկ այսօր ցփսինքնով կը ծածկուի: Այն այս է ժողովուրդին միամիտ համոզումը, որ դեռուս ծագում առած ըլլայ սա պարագայէն որ Յոյները Սուրբ Սարգիսի պահճին ուտիք կ'ընեն, ոմանք նոյն իսկ չափազանցելով կ'ըսեն թէ նախապաշարեալ խուժանը Յոյն մը բռներ և փոսին մէջ նետեր է Սուրբ Սարգիսի պահճի միջոցին, քովը թողլով միայն պահճի կերակուրներ: Իսկ այն պահքը ուտելու համար իր կօշիկին կաշին կրծեր է:

Ամէն պարագայի մէջ Սուրբ Սարգիսի վրայ պատմուած աւանդակէ պնեւրուն սկիզբը շատ հին պէտք է ըլլայ, և հասնելու է կուսպաշտական շրջանին, այն միջոցին ուր Գողթան երգիչները Արտաշէս թագաւորը իր սև ձիուն վրայ հեծած անցընել կուտան գեաը, որպէս զի Ալանաց թագաւորին Սաթենիկ աղջիկը հափափէ:

Կուսպաշտական ամէն սովորութիւններ այնքան արմատացած էին, որ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ հաստատուելէն վերջը ստիպուեցաւ զանոնք նոյնացնել աւելի բարձր կրօնքի մը տուեալներուն հետ, որպէս զի հոգեւոր տուեալներու պատճառ չըլլայ:

Մ. Զերագի l'Orient Ineditէ քաղելով թրգմանց, ՄՐԻՂՐԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

(1879ԻՆ)

ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ Ս. ԱՐՔԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ

Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց

Տաքիներ են որ անցեր են, և թերեւս օրեր՝ որ
գեռ կը մնան: Եւ ի՞նչ է արդէն այս կեանքը՝ որուն
հտեւէն կը վազենք, և հասնիլ կ'ուզենք և չենք
հասնիր: Ոչ ուրիշ բան՝ բայց եթէ ճամբայ մը, ու
րուն վրայ մարդկութիւնը կը քայլէ անվերջ անդա-
դար: Եւ հիւլէնքու նման կ'անհետի անսպառ հատ-
նումով ու մաշումով:

* * *

1879ին ամբան մէջ էր որ օր մը ներսէս վարժա-
պետեան կը կանչէր զիս, և ցոյց տալով Պատրիար-
քարանի իր սենեակին մէջ երկու կարգերու վրայ
շարուած թիկնաթուռներէն միոյն վրայ նստած եկե-
ղեցակիան մը, կը յանձնարարէր զիր մը գրել Ռու-
սիոյ Դեպքան Պ. Նովիքօֆի, որպէս զի հաճի հրաման
տալ ընդհ. Հիւպատոսարանին, վաւերացնելու անոր

անցազիրը էջմիածին ուղեւորելու և եպիսկոպոսական աստիճան ստանալու համար:

Այս գործողութիւնը անհրաժեշտ էր, վասն զի Ռուս կառավարութիւնը արգիլած էր, և թայլ չէր տար որ օտարահպատակ եկեղեցականներ մտնու գործեն Ռուսիա, և Հայոց համար՝ առանց վեհ. կաթողիկոսին հաճութեան ու հաւանութեան:

Եւ վարդապետը կը հետեւէր ինձ գրասենեակի՝ գիրը գրելու համար: Պարթև հասակով, սեւ մազերով, սև սօրուքով եկեղեցական մըն էր ան, և այդ օրն էր որ ճանչցայ Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Յովակիմեանը, Կուսպար-Մանազարեանի Անդրանիկ Ժառանգաւորներէն՝ Ներսէսի ձեռնաստունն Ներսէսի Նիկոմիդիոյ Առաջնորդութեան օրի փոխանօրդն, և ապա՝ վիճակին Առաջնորդն՝ որ պիտի ուղեւորէր էջմիածին:

Այս հանդիպումն ու ծանօթութիւնը շատ հաճելի եղաւ ինձ, և կարծեմ, Տ. Ստեփանոս Վարդապետին համար ալ, և մեր յարաբերութիւնները հետզհետէ շատ մտերմական եղան: Էջմիածինէ վերաբարձին Արարատէն քարի կտոր մը բերաւ ինձ նուէր, ինչպէս խնդրած էի, և քարի կտորը մինչև վերջը աչքիս առջև մնաց գրասեղանիս վրայ՝ ինծի համար իբրև չքանդ զարդ մը, եւ յիշատակը Տ. Ստեփանոս Սրբազանին, թէեւ օր չէր ըլլար որ չստիպուէի անոր համար բացատրութիւն տալու այցելուներու, մինչեւ որ ինծի հետ ամենուն աչքն ալ վարժուեցաւ անոր:

* * *

Տ. Ստեփանոս Սրբազան շատ չէր երեւար Պոլսոյ մէջ, հազիւ մէկ երկու տարին անգամ մը, եւ այն ալ երբ վիճակին վերաբերեալ յարաբերական կարեւոր խնդիրներ ունենար կամ պատահէին, ինչպէս 1881—82ի Եւլաք տերէ-Չալկարայի սովի օրերն, եւ տեղն է շնորհակալութեամբ յիշելու որ Հայոց Պատրիարքին մէկ գրոյն վրայ՝ Պ. Ժորժ ԶարիՖի 500 լիրա ոչ թէ կը զրկէր, ալ ինք անձամբ Պատրիարքարան կը բերէր ու կը յանձնէր Սրբազանին ի նըպատ սովելոց, Բովմէլիէն Պօշնաք գաղթականներու հայաբնակ գեղերուն մէջ կամ մօտերը տեղափոխութիւնն կամ բնակացութիւնն, եւ կամայ կամ մաց անոնց հողային յափշտակութիւններն՝ պաշտպանուած Սուլթան Համիտի օրով Եւլաքի պօշնաք սիրահնօրներէն, ինչպէս որ մինչեւ ցարդ գրաւուած կը մնայ Պալեան կարապետ Ամիրայի կողմէ Երուսաղէմի նուիրուած Եւլաքայի Ագաթակի հողերուն մէկ կարեւոր մասը: Իսկ մասնակի խնդիրները ինք կը կարգադրէր, կը վերջացնէր տեղւոյն վրայ, այնպէս որ իր նամակներու թուահամարը եթէ 1914ին 7000ը կ'անցնէր, ինչպէս կ'երեւին իր գրերուն գլուխը տըրուած թուանշաններէն յիսուն տարուան շրջանի մը մէջ հազիւ թէ հազար մը կարելի է գտնել Պատրիարքարանի առդիւններուն մէջ: Տ. Ստեփանոս Սրբազան անձայն անշուկ գործող մը եղած է, միշտ

այցելութեան մէջ իր թեմերը, տեղ մը դպրոց մը շինած է, տեղ մը եկեղեցի, տեղ մը բաղնիք, տեղ մը ազբուր, ինչպէս որ տեղւոյն պայմաններն ու իր հօտին անդորրութիւնը կը պահանջեն: Բայց, արհեստ, որ 1915ի անցքերն ժողովուրդեան մեծագոյն մասին հետ այս շինութիւններն ալ փճացուցած ու քարուքանդ ըրած են: Իսկ իր անձնուիրութիւնն հանդէպ իր հօտին՝ իր հոգեւոր ծնողին նման, վեր է աճն գովեստէ, քանի որ ամէնուն ալ յայտնի է թէ երբ վիճակայիններն՝ իբր 70,000 Հայեր, կը տարագուէին, դէպ ի Տէր-Ձօր, Տ. Ստեփանոս Սրբազան՝ իբրեւ նոր Մովսէս մը, ցուպը ձեռքը, վերաբեկուն կոնակը, հետեւած է անոր, եւ չէ բաժնուած իր հօտին քովէն, հակառակ անոր որ Աւստրո Հունգարիոյ Դեսպան Մարքի Բալլավիչինի դիմումին վրայ տեղական թուրք իշխանութիւններն արտօնած են որ ինք վերադառնայ իր տեղը: Բայց Տ. Ստեփանոս Եպ. պատասխանած է որ իր ժողովուրդն ուր որ ըլլայ, ինքն ալ հոն է. եւ մերժած է իրեն համար եղած մասնաւոր թրջուութիւնը: Եւ այսպէս մինչեւ ցայսօր Արարիայէն մինչեւ Թրակիա անբաժան կը հետեւի իր հօտին, ուր որ սեւ ճակատագիրն առաջնորդէ զայն:

Տ. Ստեփաննոս Սրբազան կէս դարէ աւելի Հայ եկեղեցականի կեանք մը ունի, որ՝ մեր երանանշնորհ նախնեաց նման, միշտ բարձր պահած է անոր փառքն

ու պատիւը, եւ հաւատարիմ իր ուխտին՝ անբաժան մնալով իրեն պատկուած Նիկոմիդիոյ վիճակէն:

Պատրիարքարանի արձանագրութիւններն ալ ցոյց կուտան որ ժամանակակից վիճակաւոր առաջնորդներուն մէջ անոր հարազատ մէկ տիպարն եղած է նաեւ Սերաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս Ս. Արքեպ. Թահմիզեան՝ որ արեւոյտութենէն մինչեւ Արքեպիսկոպոսութիւն եւ ցմահ անբաժան մնացած է իր վիճակէն, եւ արժանապէս հովուած իր հօտը, դիմագրուելով ժամանակակից արհուլիրքներու եւ վըտանդներու 1894—96ի կոտորածի օրերուն, եւ անկէ վերջ միակը 800 է աւելի որբեր ամփոփած ու խնամարկած է Ս. Նշանի վանքին մէջ:

Սակայն, արհեստ, եւ հազար արհեստ, որ Ազգին արդի ճշնոժամի օրերուն հռնձիք բազումք են, եւ մշակվ սակախ:

27 Յունիս 1922 Գրնայր

Գ. ՇԱՅԿԱՆ

* *

Կ'արժէ յիշատակել այս առթիւ թէ Տ. Ստեփանոս Սրբազան տարւոյս ամբան ասթազին օրերուն իբր երկու ամիսներ իր հօտին բարելաւութեան նըպատելու երանդով Պոլսոյ մէջ ամէն բարձր շրջանակներու դիմումներ կատարեց և յաջողեցաւ կարելոր նպատակահասցով թրակիոյ գոյնուող իր ժողովրդեան: Բայց, աւագ, որ ուժմ նոյն տեղէն ալ տեղահան կ'ըլլայ կրկին Բիւթանական դժբախտ ժողովուրդն:


Ս. Գ.

ՀԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

Միլան՝ հիւսիսային իտալիոյ ամէնէն հարուստ ու բազմամարդ քաղաքն է, որ իր մէջ կը կեդրոնացնէ ճարտարարուեստի բոլոր ճիւղերը. հարթ մակերես-
ւոյթի մը վրայ հաստատուած սոյն քաղաքը շատ գե-
ղեցիկ տեսք մը ունի, ծառուղիներ, ընդարձակ
փառներ, ճեմավայրեր, լայնանիստ ուղիներ, հասա-
րակաց պարտէզներ՝ իտալացի մեծ մարդոց մեծադիր
արձաններովը զարդարուած ու անուանուած. շէն-
քեր հոյակապ, մէկզմէկէ փառայեղ, ճարտարապե-
տական հրաշալիքներ, որոնք քաղքին ամէն կողմը
կը զարդարեն վայելչօրէն:

Միայն սյաչափով չէ որ անուանի եղած է Միլան.
ունի դարաւոր համալսարաններ, շքեղ թատրոններ,
հինաուսրց եկեղեցիներ, թանգարաններ ու մանա-
ւանդ մատենադարաններ զորոնք յիշատակել բաւա-
կան չէ, պէտք է երթալ այցելել ու տեսնել իրենց
մէջ գտնուած գլուխ-գործոցները:

Այժմ, պէտք է երթալ տեսնելու համար Սանթա
Մարիա ձեյլէ Կրացիէ եկեղեցւոյն մէջ Լէօնարտո տա-
վինչիի՝ իտալիոյ մեծահանձար մէկ զաւակին՝ նկարել-
արձանագործ, ճարտարապետ, ճարտարագէտ, բա-
նաստեղծ, գրագէտ ու երաժիշտ, որ իր մէջ կ'ամ-



Սանթա Մարիա՝ տէլէ Կրացիէ եկեղեցին

փոփէ դեղաբուեացի բարձր ճիւղերը, որոնք կը ցուանան իր հանճարէն, արեւուն բոցանշոյլ ճառագայթներուն պէս, հոն այդ հինաւուրց շէնքին մէջ պատին վրայ Թրեսո նկարած է ըմբրեաց մեծ նկարը, եւ ինքն է հեղինակը ձօգօնաց յաւիտենապէս անմահ նկարին, որուն դէմքին վրայ միշտ կը փայլի կենդանի ժպիտը:

Ուրիշ շէնքի մը՝ Պրէքոյի հին ու մթնշաղ պալատին նկարներու սրահը կը զարդարեն Բաֆայէի Ամուսնութիւնը, Լէօնարտօ տ' Վինչիի Քրիստոսը, եւ իր աշակերտներէն միոյն Լուինի Սուրբ Կատարինէի քաղաւը՝ հրեշտակներու ձեռքօք. եւ մասնաւանդ Պէլլինիի՝ Իտալիոյ ուրիշ մէկ հանճարին անմահ մէկ արտադրութիւնը՝ Քրիստոսի մարմինը Մայր Աստուածածնայ գիրկը հրաշալիօրէն հրաշալի նկարը, որուն առաջ մարդ ընդ երկար յափշտակուած կը մնայ, կը դիտէ անհնապիշ լուռ ու անմուսնչ զմայլանքէ զմայլանք կը թեւածի, կը վերանայ ու անկամայ կը հեռանայ միշտ այժերը հոն սեւեւած:

Նոյն պալատի մասնաւոր սրահներու դարաններուն մէջ պահուած կան մեծ խնամքով ու հոգածութեամբ Կալիէօ Կալիէի Իտալացի աստղաբաշխին Թղթակցութիւնը, լատիներէն Աստուածաշունչի մը 1462ին տպուած տպագրութեան զիւտէն 36 տարի վերջը:

Բայց մի վարանիւր շարունակելու քու այցելութիւններդ Միլանի հրայշէն քաղաքին զանազան սըր-




Պրերայի մէջ—Բաֆայէի «Ամուսնութիւն» նկարը

բավարերը՝ ուր պահուած կան այնչափ անգին գաւ-
 ձեր, ու քիչ ժըն ալ յառաջացիր ու ինքզինքը կը



Պրերայի մէջ Պելլինիի
 «Գրիսոսի Մարմինը Մայր Աստուածածնայ
 փրկը»

գտնես Ամբրոսիոսեան մատենադարանին առաջ, որուն
 որահաներէն միոյն մէջ կայ պահուած լէօնարտո տա
 վինչիի գրական երկոց հաւաքածոյին միակ օրինակը,



Բնագատուական Մուզէոն

հոն են նաև Վերգիլեայ Մարտինի, Տիտոս Լիվիոսի Տարեգրոց մազադաթեայ ձեռագիր օրինակները, իսկ նկարուց սրահին մէջ կը տեսնուի հռոմէացի մեծագոյն վարպետին՝ Բաֆայէի Արեմիի դպրոցի հռչակաւոր նկարը, որ կը ներկայացնէ հնոյն Հելլադայի ամբողջ հանձարները, որոնք իրենց կարգին ի հանդէս եկած են գեղակերտ բեմի մը վրայ: Այս միեւնոյն մատուցադարանին ուրոյն դարաններուն մէջ շարուած են Հոմերի իլիականին՝ հատակոտոր յունարէն բնագիրը, Տանթէի՝ Երկնային կասակերգութեան մի օրինակը, Պըզատոնի ու Կիկերոնի ձեռագիրները:

Բայց պէտք չէ մտնալ այցելելու նաև Բնապատմական շքեղ Թանգարանին հոյակապ շէնքը, որուն շինուածքն իսկ ճարտարապետական ու գեղարուեստական մեծագործութիւն մըն է համակ մարմարեանէ կառուցուած, ուր պահուած կան գիտութեան անգին ու տնքաւ գանձեր, ամէնքն ալ ապակեայ դարաններու մէջ շար ի շար, դարբերու կարգաւ. հոն է որ կը տեսնես բրածոյ ու անդրջրհեղեղեան կենդանեայ ոսկերտոն, կամ անոնց հետքերը քարերու վրայ դրոշմուած, թռչուններու, սուղուններու, ճծիներու և միջատներու անթիւ ու անհամար տեսակներ, որոնց մէջ կան հազարաւոր դարբեր առաջ ապրողներուն ոսկորները:

Ու կը հեռուանքու երկարատու այցելութիւններէդ մտածելով միշտ քաղաքակիրթ ազգի մը մեծ ութեան վրայ:

Ա. ՊԻՒԵՆՃԵԱՆ

1922 Սեպ. Օրթագիւղ

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ

(ԱՆՏԻՊ)

ԱՆՄԱՀ ԲԵՐԹՈՂ

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆՆԻ



Անձըս է նիհար, հասակըս երկար
Սուր ոտը միակ, աչք մ'ունիմ ծակ.
Եւ երբ բուննի գլուխըս մազ մի,
Ի մէջ երկու զատ բաներու
Անցնիմ դառնամ իրար կապեմ
Եւ ես հոն չեմ.

Սոյն հանելուկը Տարեցոյցիս նուիրած է բանասէր ուսուցիչ Տիար Առաքել Պիպէուճեան, որ յաջողած է գտնել զայն անմահ քերթողին ուսումնասիրութեան համար իր պրպտումներուն ատեն հայ-Հոռովմէական տիկնոջ մը քովէն. Դժբախտաբար իր Յուշարձանը հրատարակած ատեն չէ ունեցած զայն.

Հանելուկս մինչեւ 1 մարտ 1923 լուծողներու անունները պիտի հրատարակուին յառաջիկայ (1924) Տարեցոյցիս մէջ. Առաջին անգամ լուծողը պարզու պիտի ստանայ լաւագոյն հատոր մը Գարամճեան Գրատան կողմէ, Կ. Պոլիս, Չարմաքըլար թիւ 50:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՄՆԵՐ

Ամէն կրօնէ մէյմէկ թել մազ
Առնուս նէ՝ միւրուք կ'ըլլայ,
Աքաղաղը կատարբովը կը պարծի,
Իեւն ալ իր մեծ քիթովը:

Երես մ'ունի որ, հագուիս Երուսաղէմ երթաս չի
մաշիբ:

Եօթը եկեղեցի շինելուդ, եօթը որբ մարդ արա.
Թէ՛ հոգաս՝ բուրաստան, թէ՛ չհոգաս՝ մացառըս-
տան:

Ինչուան առուն ջուր գայ, գորտին աչուին դուրս
կուգայ:

Իշուն հարցուցեր են, ի՞նչ պաշտօն կ'ուզես. ա-
սաց. ձմեռն ըլլիմ կատու, ամառը հովուի շուն:

Լան լան թեւեր ուժ չկայ, խոշոր աչուի լուս
չկայ:

Լաւ է խոզանալ քան թէ խոստանալ եւ չկա-
տարիլ:

Ծլիս ծաղկիս, վարդ բոլորիս:

Գտրիճը ծիէն իյնայ, վագէ նորէն կը հեծնայ:

Հարուստը օձ է կերեր, ըսեր են՝ դեղ է, աղ-
քատը կերեր է, ըսեր են՝ քաղցած է:

Զկան հարցուցեր են. ծովէն ի՞նչ խապար.—
ըսեր է. ըսելիք շատ ունիմ, բերանս ջրով լիքն է:

Մէջը բորբոս, դուրսը ֆիլիպոս:

Մէկ ծաղկէն օձը թոյն կը շինէ, մեղուն՝ մեղը:

Մարիկը է տաքուկ հացիկ,

Մ՛վ ուտէ, կուկշտացնէ:

Հարիկն է անպակ գինի,

Մ՛վ խմէ, կու արբեցնէ:

Աղբարն արեգակ նման

Սաքն ու ծոր հաւսար կը ցաթէ:

ՀնՈՒԹԻԻՆՔ ԱԿՆԱՅ

ՃԱՆԻԿԵԱՆԻ

ՇԷՑՔՍԻՐԵԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ


Պատանութեան վաղ առաւօտին, ջինջ ցօղի պա-
հուն վարակիչ հովերն շատ աւելի երկիւղալի են:

Ընտրած եւ փորձած բարեկամներդ պողպատ օ-
ղերով պրկէ հոգւոյդ հետ:

Զգուշացիր կռուէ, բայց երբ մտար մէջը, այն-
պէս տար գործը, որ զգուշանայ ոտխաղ քննէ:

Ճշմարտութեան ձուկը կը բռնէ սուտի խայծը:

ԾՂՐԻԴՆԵՐՈՒ ՀԱՄԵՐԳԸ



1921 թուի Մայիսի 17ի երեկոն էր. ջինջ ու կապուտակ երկնակամարին մէջ, պատկառազգու հանդիսաւորութեամբ մը կը լողար գիշերային թագուհին



Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ

լուսինը, իր խորհրդադաւոր ու կաթնագոյն ճառագայթներով արծաթագօծելով նահրէլ-Սմարի անապատը, ուր կառուցուած վրանային քաղաքը, թագուած խոր քունի մէջ կը հանգստանար:

Մոծակներու ինքնակոչ երաժշտաստուբեր, իրենց սուրնաւոր հետեւորդներով, պաշարած են անկողինս, իզուր կը օքնիմ վերմակի մէջ ծրարուելով խափանել անոնց սուրններու հարուածները. վերէն վարէն, աջէն ու ձախէն, ծակ մը, անկիւն մը կը գտնեն. ներս կը մտնեն կ'երգեն ու կը խոցոտեն. Այսօր

կարծես մոծակները սովորակալէն աւելի եռանդ ուրիշ յայտ բերած են, ու իմ ինքնապաշտպանութենէս զայրացած վճռած են խնդալ քթիս: Այլեւս չը կարողացայ դիմանալ. վեր ելայ վերցուցի մենութեանս մտերիմ ընկերս ծխատուփս ու դուրս ելայ վրանէս:

Լուսնի հմայքը, շրջապատիս անապատավել լուսութիւնը, սպիտակ կտուրներու խորհրդաւոր միօրինակութիւնը, վայրկեանապէս յափշտակեցին էճութիւնս. մոծակներու համարզն ու սուրններու հարուածները մոռացայ: Բնութեան գեղեցկութիւնը վայրկեանապէս զգալի դարձուց զիս տարագիր դժբախտիս ըովանդակ դառնութիւնները: Վայրկեանապէս ուռած սրտէս հրարուխի մը նման դուրս պտուցուեց խորունկ հառաչանք մը. գաղթականի ահաւոր վիճակը ծանրացած էր սրտիս. կ'զգայի որ դժբախտ ժողովրդեան մը աննշան մէկ հիւլէն էի ես. կ'զգայի որ ամայացած հայրենիքի մը ընկճուած ու յուսահատ մէկ սեւաբախտ որդին էի ես:

Այ կողմս կը տարածուէր վրանակերտ հիւանդանոցը իր դժբախտ ընկալութեամբ, որոյ անքուն աչքերէն հոսող փալիլուն կաթիլները լուսնի պողոցուքերուն տակ կառկայծէին, անոնց վշտատապակ սըրտերէն ժայթքող մաղձոտ հառաչանքները, իրենց այրուած շրթունքներէն սահելով, զայրացկոտ պտոյտներով ու ու ահաւոր սիւներով երկինք կ'ուղղուէին խաթարելու լուսնեակի հաճելի կաթնագոյնը, վըշ-

տահար սրտերու հալեցնող հառաչանքներն էին անոնք սև ու անաւոր. Որքան կ'ուզէի անքուն ժամերս այդ դժբախտներէն անքուններու քով անցնել. անոնց ցնւովը տաւազիլ, անոնց արցունքին ու հառաչանքին մասնակից ըլլալ. չէ՞ որ այդ ալ կը թեթեւացնէր, կ'սփոփէր քճճճուած սիրտս որ կ'ուռի ու չի պայթիւր, որ կը փրփրի բայց իր պատերը չի խորտակեր:

Կը դառնամ դէպի ձախ, 40 վրաններէ բաղակացեալ որբանոցն է ան, ուր կ'ապրիմ և ես. վարանոտ քայլերով կ'անցնիմ վրաններու եզերքներէն. 850 փոքրիկներ, տաքութեւէն վրաններուն տակ պառկիլ չի կարողանալով, խառն ի խառն ցրուած են վրաններու շուրջ ու մշիկ մշիկ կը քնանան: Ո՛հ, երջանիկ մանկութիւն, պէմուրազ աշխարհի տառապանքին էն զարուբելի բաժակը մինչև իր յետին մրտըը ըմպելէ վերջն իսկ, որբութեան սև շղարշով պլլուած, լուսնի պազ ցուքերու համայրներու տակ կը քնանան անոնք խաղաղ ու անդորր... Ախ որքան, որքան կ'ուզէի ես ալ մանուկ մը լինել այս անմեղուկներու նման և մշիկ մշիկ քնանալ. որքան կ'ուզէի կեանքի այդ մեծազոյն բարիքը վայելել խաղաղ ու անվրդով. կը մտենամ փոքրիկներէն միոյն, վերմակը մէկդի հրած պառկած է կունակի վրայ, ձեռքերն ու ոտքերը տարածելով կրցածին չափ լայն, Մորփէսը խաչած էր վայն... Տեսաքրքրութեամբ

«Պարտաւորութիւն» անկողնի վրայ ընկած մեծահասակ մի փոքրիկի հետ (1920 թ.)




կը դիտեմ փոքրիկ կուրծքը որ բարակ շնչառութեանն կը բարձրանայ ու կը ցածնայ. պզտիկը կը քնանար խաղաղ քունով մը. բայց անհետագիստ կուրծքը արթնել էր ու իր պարտականութեան գլուխ. ան կը բարձրանար ու կը դաժնար, մարդկային գործարանը կ'աշխատէր անդու, և կերանը կը հոսէր փոքրիկի փոքրիկ երակներէն ներս. ան կը մեծնար... Զարդու փշուր եզամբ ցեղի մը ապագայի սիւներէն մին պիտի ըլլար ու ես ակնապարար կը դիտէի այդ մատաղ տունկի աճիլը, որը մեծնալով մեծնալով ստուերախիտ կաղնի մը պիտի դառնար մի օր իր շուքին տակ հայրենի աւերակները հովանաւորելու համար: Կարգով աչքէ կ'անցնեմ բոլոր փոքրերը. բոլորն ալ կը քնանան անուշ քունով մը. որքան հաճելի է լուսնկա շողերով շքիլ այս փոքրիկներուն բարձրատանին մէջ: Որքան ակնապարար է փոքրիկ կուրծքերու միօրինակ ու համաչափ բարձրանալն ու ցածնալը. որքան մխիթարական, որքան յուսադրիչ է ցեղի վերակենդանութեան այս ոգևորիչ պատկերը: Իցի՛ւ թէ գերբնական կարողութեամբ մը օժտուած կարողանայի կարդալ թէ՛ ապագան ինչ է վերապահած այս բուրաստանի մէջ լուիկ մնչիկ մեծցող ապագայ սերունդին, իցի՛ւ թէ տեսնել ու կարդալ կարողանայի սիրտը այն Արարչին, որու ամենակարող ստեղծագործական կարողութեան կը վերագրուի այս գեղեցիկ երկնակամարը: Կ'ուզէի կարդալ սիրտը սառ-

նասիրտ լուսնեակին, հասկնալու իր այս կախարդիչ պայծառութեան տակ պարփակուած զգացումը վերածնող ցեղի մը կենսունակութեան հիացումի՞ թէ ոճրապարտի մը յագուրդը ցուցադրող ցնծութեան մը հետեւանքն էին, փոքրիկներու մատղաշ այտերէն քաղած իր համբոյրները: Կը մտեանամ փոքրիկներէն միոյն, վերանկին մեծազոյն մասը քնացող պզտիկին տալիս է. զգուշութեամբ կը քաշեմ. պզտիկը կը շարժուի. յօրանջլու նման շարժումներ մը կ'ընէ ու նորէն կը թաղուի խոր քունի մէջ. ես ծանկնով զինք կը մտեանամ երկրորդին, երրորդին: Յանկարծ վրանաշարքի մէկ ծայրէն կը լսուի ըհ՛, ըհ՛ը հազուապէս մը, ապա լպպտերի մը ազօտ լայսը կը ճառագայթէ: Որբանոցի գիշերային պահապաններն էին, կը մտեանան, հետաքրքրութեամբ կը դիտեն շարժումներս. ապա իմ յանդիմանական ակնարկները հասկացած, լուռ ու մունջ կը ձեռնարկեն սկսածս գործի շարունակութեան: հաստատ համոզուելով, պահապանները սկսուած գործը մինչև վերջը պիտի տանին: Ես մատնեքուս մէջ սիկառու ուրբելով կը յառաջանամ, և եթէ մէկը այդ վայրկեանին ուսիս զարնելով հարցնէր թէ ինչ կը իրոհհիս, պատասխանը լինելու էր ոչինչ... Եւ իբրև ալ լուռ ու մտածկոտ երեւոյթիս ճիշտ հակապատկերն էր ուղեղս ուր բացարձակապէս ոչինչ կար, կարծես քնացած լինէի. կը շարժուէի. կը ծիւէի շարժուն մեքենայի մը

հանգսյն, ուղեղս ու փիղերս այնքան վատ ցնցում մը կրած էին որ կարծես յոգնած կը քնանային, թէև ես կը քալէի:

Յանկարծ ինքզինքս գտայ փոքրիկ փոսիկի մը առաջ. գերեզմանոցն էր այն, որ հազիւ որբանոցէն 100 քայլ հեռու էր. նահր էլ-Օմար հասնելէս ի վեր երբորդ գերեզմանոցն էր այս, որ որպէս անպէտք և անգործածելի մի գերտնի, արաքները արտօնած էին որ մեռելները թաղուին. այս անպէտք հողին մէջ սակայն մեռելները հանգիստ էին, որովհետեւ արաքներ այլեւս գերեզմանները բանալով մեռելները դուրս նետելու նման ցուցեր չէին ըներ. ցայցեր մը որ ըրին նախկին երկու գերեզմանոցները որպէս գերեզմանոց գործածելը արգիլելու համար: Երկար գիշերանոցով, գերեզմանոցի մէջ կանգնած, լուսնեակի լայսով ողորուն, կատարեալ ուրուականի մը երեւոյթն ունէի: Հանդիսաւոր հանդարտութեամբ մը կը դառնամ չորս կողմս, ու կը դիտեմ անշուք բռնածերու խնամտ շարքերը. որոնք լուսնկայ գիշերուան խորհրդաւորութիւնովը շրջապատուած երկիւղ ու պատկառանք կարտաշնչէին. մեռելներ... մեռելներ... ինչո՞ւ չեմ տեսներ. ո՞ւր են ձեր անհանգիստ ուրուականները, կը շշնշեմ ես մտովին, բարձրաձայն արտայայտուելու քաջութիւնը չսունեալով. ու յոգնած կը նստիմ հողաթուժքի մը վրայ: Բայց հազիւ թէ նստած էի, երբ ետեւէս լսելի ե-

Նահր-էլ-Օմարէն կը մեկնին գեպի Երուսաղէմ



դաւ զի՛ կրածժողովեան մը միօրինակ խաղերու
անվերջանալի շեշտերը, սարսփած վեր ելայ, ուղե-
ցի ստուգել թէ՛ ո՞ր տեղէն էր որ կը լսուէր այդ ձայ-
նը, ու մինչ ետ փնտռտուգիս մէջն էի, նհան գե-
րեզմանոցի չորս կողմէն լսելի եղան նհան ձայ-
ներ ճըռ . . . ճըռ . . . ճըռ . . . ճըռ . . . վայր-
կենապէս զարհուրանքը շրջապատեց զիս. ինծի այն-
պէս կուգար որ ուրուականները արձագանգած էին
ի՞մ կողքս, և խուռներսմ դուրս խուժած ներկա-
յութիւնսն զգալի դարձնելու թշուառիս, որ կէս
գիշերուայ այս խաղաղ ժամին, գերեզմանոցը դալու
յանդգնութիւնը ունենալով, խանգարած էի իրենց
յաւիտենական հասցիստը: Ամբողջ մարմնովս այժ
ու ականջ դարձած, զգուշութեամբ կը դիտեմ
շուրջս, տեսնելու ուրուականներու երկայն ու զար-
հուրելի հասակները, որոնք անխառնափեղիօթէն հե-
տեւելու էին լսուած ձայներուն: Յանկարծ նկատե-
ցի որ, հողաթումբերուն մէկուն վրայէն կը լսուէր
միօրինակ երածժողովեան ձայնը աւելի ուժեղ և ա-
ւելի բարձր: Կամաց կամաց մօտիկցայ, ու լուսնի
լոյսով շատ որոշ կերպով դիտեցի փնջիկ ծղրիզն, որ
իւր թափանցիկ թւեւերը օդի մէջ պարզած, իւր մե-
ծութեան անհամապատասխան գոռ ձայնով մը կ'ե-
զերերզէր իւր գերեզմանոցային ողբը: Հրածեշտ
տուած դատողութիւնս կը վերադառնար, և ուր-
ուականներու ձայներու տեղ, այժմ ականջիս մէջն

էին ըստմաթիւ ծղրիզներու միօրինակ համերգները:
Մեքենաբար ձեռքս ծխատուփիս մեկնեցիլու սիկառ մը
վառելով սկսայ տեսդոտ փութկոտութեամբ մը ծխել . . .
Դժբախտ մեռելներու ողբերգուներ, երգեցէ՛ք սքօան
կրանք ունիք, ողբացէ՛ք, սքօան շունչ ունիք, որով-
հետև մենք այնքան ողբացինք որ ողբը մեզ իրմաս-
տը կորսնցուցած է, այլեւս ողբի ձայներէն չենք
յուզուիր. այլեւս մեռելներու շարաններ չեն ազդե-
մեզ, որովհետև ամէնքս ալ մեռելներ ենք ու
կանգնած գերեզմանոցի ճամբին, գէպի գերեզմանոց
ուզեւորողներու կարուանը այնքան մեծ, այնքան
ստուարաթիւ է որ ողբացող մը չը կայ այլեւս: Լու-
սը նկայ գիշերներ հնչեցուցէ՛ք ձեր կեդերերգերը կըր-
ցածնուդ չափ ուժեղ, որովհետև նահր-էլ-Օմարի ա-
ւազներու մէջ իւր շունչը փչող ժողովուրդը արցունք
չունի այլեւս, նահր-էլ-Օմարի անապատը ոչ կուսնկ
ունի ոչ անծեղ, ոչ սոխակ ունի և ոչ ծիծեռնակ,
ոչ աքազիլ ունի և ոչ նոյն իսկ ողբերգու ու չարա-
գուշակ բու՛նբերցէ՛ք ծղրիզներ, երգեցէ՛ք ձեր հա-
մերգը, երգեցէ՛ք անապատի միակ փառք ու պար-
ծանքը եղող երածժողատագէտներ: Հայրենիքի արտերու
մէջ գլխահակ հասկերուն ի տես երգելի, եր-
գեցէ՛ք որովհետև այս անշուք բունծեքուն տակ կը
հանգչին այն գլխահակ հասկերը մշակող ժողջան բա-
զուկները . . .

Հալածականի քայլերով դուրս կ'ելլեմ գերեզմանոցէն. ու կ'աւղղուիմ որքանոց, մինչ ականջներուս մէջ լսելի էին տակաւին գերեզմանոցէն լսուող ծըզ-
քիդներու համերգները ճըւ... ճըւ... ճըւ...:

Ե. ՎԱՐԳՎԱՆՅԱՆ

28/8/22 Երուսաղէմ

ԿԵԱՆՔԻ ԿԱՆՈՆԸ

Տ Ա Ս Ն Ե Ա Կ

Եթէ կ'ուզես ըլլալ զուն՝
Առողջ հարուստ իմաստուն,
Զէնք միս օղի մ'առնե՛ր տուն,
Ո՛չ այր կամ կին վատանուն.
Մի՛ շպար մի՛ զգեստ գոյնզգոյն,
Կրկն րբժիշկ անկրթօս,
Գանճուխ արթուն կանո՛ւխ բուն
Եղի՛ր առտու իրիկուն.
Մրմնէ՛ միշտ ճին Հայուն՝
Հրզօ՛ր Հայր—Մերն հուն անհուն.

3. Գ. ՄՐՄՐԵԱՆ

ՀԻՆ ՕՐԵՐԷՆ

ՇԱՀԵԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԷՏԷԻ ԳԱՆՏԻԱ ԳԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԾԱԳՄԱՆ ԵՒ ՏԵՂԻՈՅՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կրէտէի Հայոց հոգեւոր հովիւ Գեր. Տ. Գաբրիէին Վ. Արծրունի Տարեցոյցիս կը նուիրէ հետեւեալ շա-
հեկան մանրամասնութիւնները տեղւոյն Հայութեան
Ծագման եւ եկեղեցւոյ շինութեան համար.

Ապրօ անուամբ ազնուական Հայադղին շուրջ
երեք դար առաջ Կրէտէի գրաւման միջոցին, այ-
սինքն Հիճրէթի 1056 և Քր.ի 1646 թուին (Տե՛ս Հի-
ւանդ. Ընդարձակ Օրացոյց 1903 տարւոյ) Օսմ. բա-
նակին մէջ վաճառական ըլլալով, իր ճարտարախօ-
սութեամբ յաջողած է յողթական բանակին հրամա-
տաբէն քաղաքիս մէջ եկեղեցի մը առնել, անշուշտ
իր բարեօք ծառայութեան իբր վարձք, զոր վերա-
նորոգել տալով և շուրջը գտնուած տուններն ալ գնե-
լով, իբր կալուած եկեղեցւոյն յատկացուցած է.

Հետեւեալ յիշատակարանը, քաղուած տեղւոյն
Թաղ. Խորհրդոց տոմարէն, նմանահանութիւն է

Ձմիւռնիոյ Առաջնորդարանի տուժարներուն մէջ եղած արձանագրութեան մը Առկէ կարելի է հետեւցնել թէ Ապրօ (և գուցէ իր նախնիք նոյն քաղաքացի ըլլալով) սոյն եղելութիւնը ի դարձին իր հայրենիքը տեղւոյն հոգեւոր իշխանութեան յայտնած է եղեր, որ եւ իր կարգին արձանագրած է իր տօմարին մէջ, իբր Աղգ. սեփականութիւն և ի գիտութիւն ապագայ հայ ժողովրդեան, մանաւանդ թէ հարկն ալ այդպէս կը պահանջէր. ցորձան զրէտէ կղզին ի սկզբան Ձմիւռնիոյ առաջնորդութեան Տէրունի վիճակին մասը կը կազմէր. և 1828 թուէն ի վեր է որ կղզին մասնաւոր թեմի փոխուելով Պոլսոյ Պատրիարքարանի (կամ լաւ եւս Ս. Պատրիարքին ուղղակի իրաւասութեան ենթարկուած է առանց առաջնորդական հանգամանք ունենալու.)

ՊԱՏՃԷՆ ՅԻՇՍՏԱԿԱՐԱՆԻՆ

ԱՌԱՋԵՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՁՄԻՒՌՆՈՑ

Համար . . .

«Ապրօ Էֆէնտին հայրն Ալիար 1632 թուականին յերուսաղէմ յուխտ Գերթայ:

«Արահամ, այր լայնատորուոր, ժամանեալ յաստիճան տանուտիրական, քան զիւր նախնիսն ա-

ռակել եւս հետամուտ լինի բարի համբաւոյ. և ըստ նախնական կրթութեան և մտացն առատութեան և եւս բարգաւաճի օր ըստ օրէ, սիրելի եղեալ յաչս ամենեցուն, և մանաւանդ Հիւսէյին հռչակաւոր փաշայի, որ զօրագլուխն էր զօրաց պատերազմականաց ընդ Կրէտացիս, եւս ապա Բէօփրիւլիւ օղլու Մէհմէտ փաշայի մերահամբաւ նպարդոսի և ամենայն աւազանւոյն դրան արքունի, զորո և զանուն իսկ փոխեալ Բէօփրիւլիւ օղուն հրամայէ Ապրօ⁽¹⁾ ձայնել յետ այնորիկ, որ կոչուան կայ մտաց ցայսօր ժամանակի յազգս նորա:

«Սա յորժամ ի Կրէտէ էր ընդ բանակին Օսմանց արքունի վաճառական գալով Հիւսէյին փաշային, յառնուլն նոցա զկղզին, ճարտարաբան վիճաբանութեամբ առնու զեկեղեցի մի վասն Հայոց, զոր վասն ամենայն թնդանօթիցն քայքայեալ էր, իւրովք իսկ ընչիւք նորոգէ, պատրաստեալ եւ զամենայն զարդս նորա, եւ վասն զի բազում նպաստաւորութիւն արարեալ էր բանակին և հաւատարմութիւն յիրս արքունի ընդ ամենայնի, զզօրաւոր խաթիթ Երեմի մի շնորհէ նմա Սուլթան Իպրահիմս (Ա.), որպէս զի յամենայնի ազատ լիցի եւ համարձակ եւս, և ի մաքսիցն անգամ յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ:»

(1) Ապրօ Սահակ ԿՔԿնճիկն անշուշտ կը յիշուի եւ իր ազգասոսիւր:

Ապրո երթայ ի Կ. Պոլիս 1661 Թուականին

Սուլթան Իպրահիմ (Ա.) 1645

Սուլթան Մէհմետ (Դ.) Ղազի 1668

ԵԱՆՕԹ. — Վերի բուսականներուն հետ բարդասերու համար:

ՍՈՒԼԹԱՆ ԻՊՐԱՀԻՄ (Ա.) ՍԼԹ. ՄԷՀՄԷՏ Դ. ՂԱԶԻ

ԵՆ. ՀԻՃՐ. 1024 = ԲՐ. Ի 1615 ԵՆ. ՀԻՃՐ. 1051 = ԲՐ. Ի 1641

ԳՏԿԼ. 1049 = > 1639 ԳՏԿԼ. > 1058 = > 1648

Կը տիրէ Կրէտէի


Հիճը. 1056 ԲՐ. Ի 1646

ՎԽՃ. 1058 > 1648 ՎԽՃ. 1104 > 1692

Ուրեմն Կրէտէ կղզւոյն տիրապետման ճիշդ Թուականը ընդունելով հիճրէթի 1056ը և ԲՐ. Ի 1646ը, ներկայ 1922 Թուականէն հանելով կ'ունենանք 276 տարիներ եկեղեցւոյն ստացումէն ցարդ.

Բայց Յիշատակարանին մէջ կ'ըսէ թէ «Ճարտարարան վիճարանութեամբ առնու զեկեղեցի մի վասն Հայոց». սա վերջին երկու բառերէն կը հետեւի թէ յիշեալ Ապրոյի հոս (ի Կրէտէ) գալէն առաջ, արդէն հայ գաղթականութիւն մը գոյութիւն ունի եղեր կղզւոյն մանաւանդ Գանտիա քաղաքին մէջ (անշուշտ վիճարանութեաց կամ ձեննվացեաց տիրապետութեան ատեն), վասն զի եկեղեցին «վասն Հայոց» ուղղաւած և առնուած է:

Այնուամենայնիւ այդ հին հայ գաղթականութեան մասին որեւէ տեղեկութիւն չկայ:



Կրէտէի Ս. Կարապետ եկեղեցին արտաքին տեսքը

Յոյժ դարմանալի կը թուի ինձ, որ աշխարհի բա-
լոր կողմերը ցրուած ՀայուԹեան ծագման մասին Թէ
անցորդներ և Թէ յատկապէս այցելութեան ելլողներ
ընդարձակ գրած են. իսկ Կրէտէի համար ո՛չ մի
բան Արդեօք թի՛նջ է պատճառը որ մեր նախնի դիտ-
նական ճանապարհորդները չեն ցանկացեր այս կողմը
գալ: Ետեանուներու չգոյուԹիւնը, և առագաստա-
նաւերով ճամբորդելու դժուարութիւնն է երեւի դա-
նոնք կասեցուցեր հոս գալու, և որով տեղւոյն հայ
գաղթականութեան անցեալին և տեղւոյն մէջ տեղա-
ւորելու մասին բառ մը իսկ չէ գրուեր:

Գորուած մեծ է արդարև:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԱՐՇՐՈՒՆԻ(*)

Փանտիա

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Երկնքի բոլոր կայծակներն իսկ բաւական չեն
պղծութեան ամօթը սրբելու մեր արդար ցեղի ճա-
կատից:

Ա. ԱՆՍՐՈՆԵԱՆ

(*) Տ. Գարեգին Վ. իր այս շահեկան գրութեան
կցած էր նաեւ իր իսկ ձեռքով գծած մի քանի տե-
ղացոյց պատկերներ, սակայն ճարտցոյցիս փոքր ծա-
ւալը այդ մասին թոյլատու չլինելուն զանց ըրինք գա-
նոնք, միայն Եկեղեցոյն արտաքին տեսքը ցուցա-
դրելով:

ՀԻՆ ԷՋԵՐ

ՄԵՆԾ ԱՂԱՆ

Մենձ ազան հարուստ դրամատէր մը չէ. բայց
դրամի մարդն է անիկա. Մենձ ազային դատողու-
թեանը առջեւ դրամը մեծ ծանրաչափն է մարդկային
առաքինութիւններուն. ո՛չ Ռաֆիֆին եւ ո՛չ Գուրեանը,
ո՛չ Պարոնեանը եւ ոչ Նայրանդեանը արժէք ունին
աչքին առջև. ո՛րչափ է անոնց դիզած դրամը. տա-
րեկան ի՛նչ կը շահին. ո՛ չինչ. ուրեմն բան մը չեն
արժեր. ահա անոնց բոլոր հոգեբանութիւնը. չեմ մե-
ղադրեր, յանցաւոր չեմ գտներ զիրենք այսպէս խոր-
հելուն համար. իրաւունք ունի՛մ կոյր մը, կաղ մը
մեղադրելու. դժբախտութիւն մըն է ասիկա եւ ոչ
ուրիշ բան:

Մենձ ազան բարձր կը խօսի, զգացնել տալու
համար որ ամէնքը պարտաւոր են իրեն ունկնդրելու.
Ճամբան կամաց կը քալէ եւ կը պահանջէ որ ուրիշ-
ները իր ետեւէն գան, կամ բազմութեան մէջ կը
հրմշտկէ քովինները, իր տեղը ամբոխին մէջ չըլլալը.
այս գուհիկ շիրուսին չի հանդուրժելը հասկցնելու եւ
այս նուաստ դիրքէն վայրկեան մը առաջ դուրս ել-
լելու համար:

Մենձ աղան անպատճառ տգէտ եւ անուս չի նշանակեր. ուսեալ մենձ աղաներ ալ կը գտնուին, կէս ուսեալներ՝ որոնք բացարձակ տգէտներէն շատ աւելի զարհուրելի են. Ֆրանսերէն երեք բառ կը խօսին, հայերէն երկու բառ կը գրեն. Ոչինչ կը հետաքրքրէ զիրենք իրենց մեծ «ես»էն դուրս, եւ այդ փոքրիկ խորանին առջեւ կը զոհեն ամէն բան, միշտ իրենց խղճմտանքը, երբեմն իրենց դրամը.

Մենձ աղան եկեղեցի կ'երթայ ամէն անգամ որ հարկը պահանջէ. Ձատկին, Ծնունդին, ուրիշ մենձ աղայի մը յուզարկաւորութեան, կամ եթէ ակնկալութիւն մը ունի կամ նիւթական շահ մը որուն անպատճառ իրականացումը կը պահանջէ Աստուծմէն, 10 փարայի մով մը վառելով.

Տարեքի տեսակէտով մենձ աղայութիւնը 40էն անդին կը սկսի. բայց մենձ աղայի զաւակներ կան դեռարուսիկ պիտով երիտասարդներ, որ հայրենի աւանդութիւններուն կը հետեւին. Մենձ աղան անցեալին մարդն է Պօղոս Պատրիարքի օրերուն կարօտը կը քաշէ եւ Տէրոյնցէն փաստեր կը քաղէ. կաթողիկոս, Պատրիարք, առաջնորդ ղիմաւորելու գացող մարմիններու մէջ իր յատուկ տեղը ունի, ինչ որ իր անձեռնմխելի իրաւունքն է. Մենձ աղան՝ տվորաբար, գրեթէ ի ծնէ, թաղական է.

Սխալ կարծիք մըն է ենթադրելը որ վաճառական դասէն կը ծնի մենձ աղան. երբեք ամէն աս-

պարէզներէն կուգայ ան, էֆէնտիութենէն ինչպէս օրագրութենէն, Ձար մարդ մը չէ. կը բուէ իր անձնասիրութիւնները շոյել՝ օգտուելու համար իրմէ, կղերը ի վաղուց անտի շահագործած է զինքը. ինչքալ կղերը.

Գ. ԶՕՂԲԱՊ

ԿՆՈՋՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հոգիս բուրվառ մըն է միշտ
Յիշատակիդ սուրբ խունկով,
Տարուբերուիմ վիշտէ վիշտ,
Մինչեւ ըլլանք՝քովէ քով.

ԹԵՈԴԻԿ

ՏԻԿԻՆ ԱՐՇԱԿՈՒՀԻ ԹԷՈԴԻԿ — 1922ի սկիզբները անխոնջ բանասէր Պ. Թէոդիկ դժբախտութիւն ունեցաւ կորսնցնելու իր կեանքի ընկերուհին բարեմոյն, որ ոչ միայն հայ տունին, այլ եւ հայ գրականութեան չքնաղ զարդերէն մին էր. Սիրելի եղաւ նէ մեր համայնքին իբր համեստ եւ եռանդուն գործիչ, անձնուէր գիտակից ուսուցչուհի, զգայուն գրագիտուհի, գորովալից մայր, որ այնքան տառապեցաւ եւ որ այժմ կը գտնէ իր հանգիստը յաւիտենական հոգիներու երկնային խումբին մէջ, հոն վայելելու երանութիւն անվերջ . . .

ԵԹՈՎՊԻՈՅ ԲԱՐՁՐԱՊԱՏԻԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻՆ ԵՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ



Ն. ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՌԱՍ ԹԵՖԵՐԻ

Գահաժառանգ Իբխան համայն Երովպիոյ

Մենելիք Կայսեր մահէն յետոյ յաջորդեց իրեն իր Թուրք Լիճ Եասու հագիւ 15 տարեկան որ՝ իր ան-
չափահասութեան պատճառով՝ խնամակալ կարգուե-
ցաւ իրեն Ռաս Թասամա՝ որուն մահէն վերջ Լիճ Եա-
սու 17 տարեկան պատանի մը սկսաւ միահերժան իշ-
խել բովանդակ Եթովպիոյ վրայ հպատակեցնելով ի-
րեն ըլլոր Ռասերը՝ նահանգապետները՝ որոնք մէկ
մէկ թագաւորներ են իրենց սահմաններուն մէջ, ու-
նենալով իրենց ուրոյն վարչութիւնը, բանակը, եւ այլն։
Հակառակ որ դեռ պաշտօնապէս գահ բարձրացած
չէր ոչ ալ Կայսր հուշակուած՝ արդէն ըլլոր Ռասերը
կը խոնարհէին իր առջև, կէտ առ կէտ գործադրե-
լով իր հրամանները։ Այնքան մեծ ժողովրդականու-
թիւն շահած էր իր կորովի նկարագրովն, իր անվե-
հեր կեցուածքովն, իր անսեթեւեթ պնդութեամբը
որ ոչ ոք չէր կրնար երեւակայել թէ իր վերջնական
անկումը այնքան ձօտալուտ պիտի ըլլար։ Ինչ որ
զինքը պիտի կորսնցնէր, գերման քաղաքականութիւնն
էր։ Ընդհ. Պատերազմին Կերտան Կառավարութիւնը,
ինչպէս յատնի է, ուժեղ բարբախտ մը սկսած էր

ամէն երկիրներու մէջ իր արտասահմանեան դե-
պաններու միջոցաւ ընդդէմ Դաշնակիցներուն: Լիճ
Յասու անփորձ պատանի մը, դիւրաւ ինկաւ գերման
էնդերֆներու ցանցին մեջ: Եթովպիոյ Գերման Դե-
պանատունը, մեծամեծ խոտուածներով յաջողեցաւ
համոզել Լիճ Յասուն որ մտնէ Լինդհ. Գառերազմին
մէջ Գերմանիոյ կողքին՝ քալեցնելով իր բանակները
մէկ կողմէն Սուտանի, Եգիպտոսի վրայ ընդդէմ
Անգլիոյ, միւս կողմէ Սոմալիլանտի, ձիպութիի վրայ
ընդդէմ Ֆրանսայի: Իր այս վտանգաւոր քաղաքա-
կանութեան հետեւանօք դժգոհութիւնը իր դէմ
սկսաւ ծայր տալ ամբողջ Եթովպիոյ մէջ: Թէ այս
դժգոհութիւնը, թէ փորձագէտ Եթովպացի նախա-
բարներու յորդորականները կասեցուցին զինքը առ-
ժամապէս այս վտանգաւոր դահալէօին վրայ:

Տարի մը վերջ դարձեալ սկսաւ երկրին շահե-
րուն հակառակ գործել, Սոմալիները զինելով ձիպու-
թիի վրայ արձակելու համար, իր հպատակներուն կը-
րօնական դպացուները վերաւորելով: Ինք քրիստոն-
եայ պետութեան մը քրիստոնեայ դահալէօնը ոչ-
քրիստոնեայ տարրերը քալալեցելով ի մասս պետու-
թեան շահերուն: Ու այս ամէնը տեղի կ'ունենայ
Գերման Դեպանատան թեւադրութեամբ և սադրա-
նօք, որուն նպատակն էր ոչ-քրիստոնեայ տարրերը
միացնել քրիստոնեաներուն հետ հոժ զինուորական
ուժ մը պատրաստել և յարձակիլ Անգլիոյ և Ֆրանս-

սայի դադուլներուն վրայ: Եթովպիոյ նախարարաց
խորհուրդը՝ ալ բաժակը լեցուած նկատելով, 1917ին
վերջերը զինքը Լիճ Յասու դահալէօն հռչակեց,
յարքունիս դրուեց անոր բարձր ստացուածքները և
ձեռքակալման հրաման արձակեց անոր դէմ, միւս
կողմէն ալ Մենելիքի աղջիկը, Կայսրուհի հռչակեց,
եւ Եթովպիոյ մեծանուն յաղթանակին Ռաս Մաք-
նէնի դաւակը, Ռաս Թէֆէրին, դահալէօնը իշխան,
Կայսրուհիին հետ միասին երկիրը կառավարելու բո-
լոր առանձնաշնորհութեան տրուելու լայն իրաւասութեամբ:

Ն. Բ. Գահալէօնը իշխան Ռաս Թէֆէրի դեռ
հազիւ 31 տարեկան լիովին արդարացուց իր վրայ
դրուած յոյսերը: Կատարելալ խոհականութեամբ եւ
իմաստութեամբ կը կառավարէ երկիրը, օրէնքը, ար-
դարութիւնը բարձր բռնելով իր ամբողջ ժողովրդը-
եան համար հաւասարապէս, մտածելով, աշխատելով
իր հպատակներուն բարօրութեան: Խոհուն, կորովա-
միտ, կատարելալ հոգեբան երիտասարդ մը, կարող
իսկոյն ըմբռնելու զինքը շրջանապատուներու մտայնու-
թիւնը, հակումները, հոգեբանութիւնը, հմուտ մը-
բաններէնի, միշտ կը հետեւի Եւրոպիոյ քաղաքական
դարձուածքներուն: Ինք վերին աստիճան փափա-
քող է քաղաքակրթութեան ճառագագութիւնը իր երկ-
րէն ներք թափանցել տալու, սակայն իրպեղի իր ժո-
ղովուրդին նախնական վիճակին դիտէ թէ ժամա-
նակաւ և աստիճանաբար պէտք է ըլլայ այդ թափան-

ցումը իր աւանդութիւններուն ամրապէս կառչած ժողովուրդին մտայնութիւնը վեր ի վայր շրջելով վըտանգաւոր կոյցութիւն մը չստեղծուելու համար:

Գանի մը խօսք ալ կ'արժէ ընել այս առթիւ Եթովպիոյ Հայ գաղութին մասին՝ որովհետեւ հանդէպ Նաժարի վերաբերում մը ունեցած է եւ ունի Եթովպական կառավարութիւնը, Հայ գաղութը ցրուած է Ատիս Ապպահի, Հարարի, Տիբեդաուաի մէջ, Մեծամասնութիւնը շուրջ 200 անհատ կ'ապրի Մայրաքաղաքին Ա. Ապպահի մէջ, Ամբողջ թիւը հայ գաղութին Եթովպիոյ մէջ 350, չանցնիր, Պէտք է յայտնել ի պատիւ Հայ գաղութին թէ արտասահմանեան գաղութներուն ամէնէն ուշիմ զարգացեալներէն մին է Եթովպիոյ Հայ գաղութը. իր մէջ ունի նախկին բազմասնուտ ռուսացիներ, Պերսիական Վարժարանի ընթացաւարտներ եւ Բարիզի Ecole des Ponts et Chaussées էն վկայեալ, Եւրոպական հաճաւ ստացած, նշանաւոր մաթեմատիկոս եւ աստեղագէտ Պ. Գր. Հովուեան որ միշտ թղթակցութեան մէջ է մեծանուն Ֆրամարիօնի հետ:

Հայ գաղութին պատիւ բերող այս գիտնականը architecte et ingenieur en chefի պաշտօնով կը գտնուի Եթովպական կառավարութեան Ծառաւորութեան մէջ, թէ բազդի ինչ հակադրութեամբ այսպիսի հայ գիտնական մը եկած ինկած է Ափրիկէի խորերը, այս մասին երկար կ'ըլլայ խօսիլ: Պետական Ծառայութեան

մէջ ունինք նաեւ ուրիշ Հայեր՝ որոնց մէջ բարձր գիթք մը ունի Պ. Աբրահամ Բէօրիանձեան որ իր ուշիմութեամբ, մասաւանդ իր օրինակելի, եւ անստգիւտ ուղղամտութեամբ եւ պարկեշտութեամբ լիովին արժանացած է ն. Բարձրութեան Գահատառանգ իշխանին լիակատար վստահութեան եւ գնահատումին, եւ կարգաւած է վերջերս Տնօրէն Գահատառանդին բոլոր կալուածներուն եւ անձնական գանձուն: Թէ որքան գնահատուած է նոյնիսկ օտարներէ Ա. Ապպահի Հայ գաղութը, կ'արժէ յիշատակել սա պարագան. 1918 վերջերք Հայ գաղութը սարքած էր շքեղ հանդէս մը որուն անձամբ կը նախագահէր Գահատառանգ իշխանը եւ որուն ներկայ էր դեռ պանական մարմինը ամբողջութեամբ, Անդիոյ, Յրանսահի, Իտալիոյ, Ռուսիոյ դեսպանները իրենց հիւպատոսներով, Յետ աւարտման հանդէսին դեսպանները ջերմապէս շնորհաւորեցին հանդէսին կազմակերպիչները, եւ իտալիոյ ներկայացուցիչը կ'ըսէր սա բառերը. «Սրտազին կը շնորհաւորեմ ձեզ, Հայեր, որ քաղաքակրթութիւնը բերիք մինչև Ափրիկէի խորերը: Մեծ պատերազմին ընթացքին Ա. Ապպահի Հայ գաղութը որով թիւք կը յանդի 200ի, ուրիշ մեծ մասը կին և երօխայ, 25,000 թալեռի, 2500 անգլ. ոսկիի նուիրատուութիւն մը ըրած է բարեգործական նպատակներով, Այս թիւը նուիրատուութեան աւելի պերճախօս է քան ո եւ է գոյլստ անդէպ դադութին:

Ա. Ապպահի Հայ գաղութի մէկ մասը կը բաղկանայ աւետարականներէ, եւ միւսը արճեստաւորներէ: Արճեստաւորներն են ոսկերիչ, կօշկակար, ատաղձագործ, հիւսն, եւայն: Ամենք ալ ինքնօգնու-

Թեամբ եւ ցեղին յատուկ ճարպիկութեամբ, իրենց համար համեստ դիրք մը շինած են եւ հանգիստ կ'ապրին: Առեւտրականներուն մէջ մեծ դիրք գրաւած են Մաթիկ Գէորգօֆֆ, Գէորգ Մուրառեան, Եւսի Կարիկեան տուները: Գազուժը ունի երկսեռ վարժարան մը զոր կը վարեն Լուսուցիչ մը եւ Լուսուցչուհի մը սալով նախնական դրժութիւն մը տեղւոյն հայ մանկուսոյն: Սոյն վարժարանը հիմնելու գնահատելի նախաձեռնութիւնն ունեցած է գաղութին առեւտրականներէն Պ. Յովհաննէս Ասատուրեան, նախկին ուսուցիչ եւ ճեմարանական:

Տեղւոյն ազգ. գործերը կը վարէ զաղութեան քնարեալ և Եգիպտոսի Առաջնորդէն վաւերացեալ Թադ. Խորհուրդը: Ինչպէս ամէն տեղ, նսանապէս Եթովպիոյ մէջ կը ժողուին կուսակցական պայքարներ Թադ. Խորհրդոյ շուրջ այս կամ այն խնդրոյ առթիւ: Բայց այս պատճառ մը չէ եղած որ, որ եւ է առթիւ, բարեգործական նպատակներու շուրջ չի միաբանին եւ իրենց նիւթական լիւճուստ օժանդակութիւնը չի բերեն ի սպաս ցեղին թշուառութեան եւ կարօտութիւններուն: Եւ այս, ըստ ամենայնի պատուաբեր է Հայ Գաղութիւն եւ վերագրելի անոր սրտի եւ մտքի զարգացման: Ազգին անվերջանալի գաղթականութեան Ափրիկէի խորերը նետուած այս նմոշը միթէ ապաքոյց չէ՞ ցեղին անսպառ կենսունակութեան, ճկունութեան, ճարպիկութեան եւ բարոյական անընկճելի կորովին:

Քատըքէօյ, 2 Նոյեմ. 1922

Ս. ՍԵՄԵՐՃԵԱՆ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԲՈՒՆԻ ՎԱՌՕՊԱՊԵՏ ՊՕՂՈՍ ՊԷՅ ՏԱՏԵԱՆ

ՈՐԴԵԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ ՊԷՆՏԷՐԵԱՆ

ՈՒ ՍԻՄՈՆ ԾԱՌԱՆ



Վառօդապետ Պօղոս պէյ Տատեան Արեւելեան պատերազմէն վերջը, 1857ին, որչափ կը յիշեմ, եւ ըրոպա ճամբորդել կը հարկադրուի ու իր հետեւորդներուն մէջ կ'առնու իր որդեգիրը Մկրտիչ Պէնտերեան ու ծառան Սիմոն, այս վերջինը Վանի գեւղերէն: Պէյը Բարիզ քանի մը ամիսներ կը ստիպուի մնալ. այս աւետիսը Պէնտերեանին և Սիմոնին հազորդած ատեն, կ'աւելցնէ թէ «4—5 ամիս, կ'երեւի, հոս պիտի մնամք, նայեցէք որ հետեւնիդ բան մը տանիք Պալիս»:

— Ի՞նչ տանինք, Տէր, կը հարցընեն:

— Արհեստ մը, բան մը սորվեցէք ու այնպէս մեկնեցէք քաղաքէս, կ'ըսէ բարեյիշատակ Տատեան Պօղոս պէյ:

Երկուքն ալ կ'ուրախանան և երկրորդ օրը փոզօցները կը չափեն արհեստ մը ընտրելու համար:

Վերջապէս կ'որոշեն. Պէնտէրեան փորագրիչ ըլլալ կը մտադրէ, իսկ Սիմոն պաշտօնակալ շինող:

Երկորդ իրիկուն Պօղոս պէյին բան մը ըսելու ձեւով խնդրումներս կը ներկայանան և կ'ըսեն թէ՛ երկու արհեստ ընտրած են, փորագրութիւն և պաղպաղակաշինութիւն:

Պէնտէրեան մեքենայով քարի վրայ փորող վարպետի մը զարմացած երկար ատեն ապշած դիտած էր, իսկ Սիմոն պաղպաղակներուն զարնուած էր:

Վառօդապետը շատ գոհ մնացած էր եղած ընտրութենէն, Պէնտէրեան ուսեալ, կայտառ և ուշիմ տղայ մըն էր և վստահ էր որ պիտի կրնար սորվի: Իսկ Սիմոն թէեւ այբը տեսնէր բէնը կը փակցնէր, սակայն գիտէր թէ պաղպաղակաշինութիւնը պիտի կրնար իւրացնել:

Երրորդ օրը վարպետները որոշուած էին և Պօղոս պէյի առատաձեռնած կարեւոր գումարներու փոխարէն յանձն առած էին կարծ ժամանակի մէջ սորվեցընել իրենց արհեստը այս երկու չափահաս տղոց:

5-6 ամիսէ վերջ վառօդապետին յոյսերը պըսակուած էին և աշկերտները վարպետ եղած Բարիզէն Պօլիս կը վերադառնային:

Ս.

ՄԿՐՏԻՉ ՊԼՆՏԵՐԵԱՆ,

Մկրտիչ Պօլիս դառնալէն յետոյ հետզհետէ կը սկսի փայլել և կը փոխադրուի Ենի Գաբուէն Բերա, ուր փառաց գազաթնակէտը կը հասնի. 5-10 տարիներ բաւական կ'ըլլան իր վարպետը գերազանցելու. իր փորագրութիւններուն հաւասարող չի գըտնուիր. մէկ գերը 10 Ֆրանքի կը փորագրէր:

Պէնտէրեան մետաղներու, փոքր քարերու, ոսկիի արծաթի և պղինձի վրայ սկսած էր դէմքեր ալ փորագրել, այնպէս մաքուր և նուրբ որ ննագէտները չէին կրնար վանազանել իսկականէն:

Պէնտէրեան կեղծարար մը չէր սակայն, իր բոլոր փորագրութիւններուն մէջ իր անուան սկզբնատառը գլխադիր Մ. գիրը կը դնէր մանրացոյցով հաղիւտեսանելի:

Հայ թագաւորներու և Հռովմայեցի կայսրերու, հին դրամներու ճիշդը կը փորագրէր. սրճան Տիգրաններ, Տրդատներ, հայ իշխաններ ու կոյսեր ու Աղեքսանդրի դրամներու օրինակները փորագրեր էր. ինչ սովեղէն խօսքեր ու ոտանաւորներ խիստ փոքր քարերու վրայ դրոշմեր էր անջնջելի տաւերով:

Հատ մը ունէի իւր յիշատակ, հօրս մօրաքրոջ գաւկէն սիրելի Պէնտէրեանէս, որ փողկապիս ասեղին քարին վրայ փորագրած է ուսուցիչս, Յ. Ոսկանի տառերը, ամենքն ալ գլխադիր:

Ուղեւորին ի պանդոկէն

Զիք ինչ իւր,

Ոպա զի՞նչ մեր,

Աշխարհս՝ պանդոկ

Եւ մեր՝ հիւր:

Յ. ՈՍԿԱՆ

Կը ցաւիմ որ գողցուցի և իր յիշատակէն բան մը չունիմ քովս: Պէնտէրեան վերջի տարիները գիւտ մը ըրած էր, բաղադրութեամբ մը կը գրէր քարերու վրայ և զանոնք կրակին մէջ կը դնէր ու քիչ վերջ կը հանէր և գրուածքն անայայլ կը մնար:

Պէնտէրեան ուսեալ մարդ՝ ոսկեղէն խօսքերը կ'ընտրէր, կը գրէր կամ կը փորագրէր: 100ի ոտ քարեր իր նոր գիւտովը գրուած խրիմեան Հարիկին ծախեց, եպիսկոպոսական մատանիի համար, Տէր Յովհաննէս Մկրեանի միջոցաւ:

Պէնտէրեան ունի բազմաթիւ փորագրութիւններ Թրքերէն տառերով այնքան նաւրբ և գեղեցիկ որ Սուլթան Համիտ Արուեստից շքանշանով պատուած է զանի քանիցս:

Պէնտէրեանի վերջին գործը եղած է զուտ ոսկիի վրայ զօր մը թեւնոցի և վեց ոսկի փոքր կոճակներ շապիկի, ամենուն վրայ Սուլթան Համիտի մանրացոյցով ընթեռնի թուռան փորագրուած:

Փաշայի մը միջոցով անոնք Սուլթանին մատուց-

ուեցան, որ կը հրամայէ 400 ոսկի տալ եւ այս դրամը առնելու համար քանիցս Պալատ գացած եւ սեկաուի ծուխէն վախչելէ յետոյ վերջապէս օր մը շատ նեղուելով կ'որոշէ ելլելու զի պարտեզը սպասել ցուրտին քան ծխախոտի ծուխէն վնասուիլ հիւրանոցին մէջ: Այդ պաղաւտութեան հետեւանքով կը հիւանդանայ եւ կը մեռնի:

Պէնտէրեանի բազմաթիւ գործերուն մէջ գլուխ գործոց պիտի մտայ Անգլիոյ Վիկթորիա թագուհիին աղամանդի վրայ փորագրուած պատկերը՝ որ Պոլսոյ արուեստահանութիւնի մէջ ի տես դրուած է ժամանակին:

Փորագրած է նաեւ Հ. Ղեւոնդ Ալիշանի պատկերը իր Յօբեւելեանին առթիւ:

Պէնտէրեան իր արհեստը չէ կրցած սորվեցնել իր որդւոյն իսկ, Հրանտ Պէնտէրեանի, արձանագործ ի Բարիզ, նշանաւոր իր ճիւղին մէջ:

Բ.

ԳԵՂԱՅԻ ՍԻՄՈՆ

Գանք վառօդապետ Պօղոս Պէյի վանայ գիւղացի Սիմոն ծառային: Սիմոն անհասկընալի լեզու մը ունէր, բառերուն կէտը հազիւ կ'որոտարերէր. սակայն ինքը իրեն եղած հրահանգները լաւ կը հասկընար:

Բարիդէն վերագործին բախտը ժպտեր էր. մեծ մեծ պարգեւներ կ'ստանար իր համեզ պարգու- ղակներուն համար:

Պետական անձերու մէջ այնքան մեծ համբաւ հանեց որ օր մ'ալ Սուլթան Ազիզ կայսեր բարհաճ հրամանով solisnurifanի պաշի կոչուեցաւ:

Սիմոն լաւ դիրքի մը տիրանալէն հետք մ. ա. ցաւ հայրենի գիւղը եւ տունը, մէկ երկու վհակե- րով յաջողեցաւ ինքզինքը ամուրի նկատել տալ եւ Պատրիարքարանի հրամանով Պալսեցի աղջկան մը հետ ամուսնացաւ եւ զաւակներ ալ ունեցաւ:

Իր առաջին կինը տարիներէ հեք լսելով որ Սիմոն հարստացեր, ամուսնացեր եւ զաւակներու ալ տէր եղեր է, թողուց դիւղը եւ յանկարծ օր մը եկաւ դռնել իր ամուսինը ըսելու համար.

— «Սիմոն, զիս որով ձգեցիր եւ նոր կին առիր»:

— «Ա՛խ, սիրելիս, դուն ալ եկուր, բազմոցին մէկ ծայրը դուն նստէ, միւս ծայրն ալ ան. մինակ կուի մ'անէք» կ'ըլլայ պատասխանը:

Սիմոն հարուստ էր. դժգոհացող կամ կռիւ յարուցանել ուղող կինը քր ժառանգութենէն զբր- կելու սպառնալիքով կը տիրապետէր ասնը մէջ, իսկ սաւառին մէջ ի՛նչ որ ըսէին՝ էվէր էմէնիսիմ կ'ըսէր:

Թագաւորներ, վէզիրներ, փառաներ ու պաշ- տոնատարներ կը փոխուէին. սակայն Սիմոն չէր փոխուեր:

Օր մը իրիտթաքի փառան՝ Սուլթան Համբախ ունկնդրութեան կ'արժանանայ եւ կը մեծարուի Սիմոնի պաղպաղակովը: Յոյն փառան կ'ըսէ թէ՛՝ «իմ solisnurifanիս լիմոնով կաթով խառն պաղպաղակ մը կը շինէ, այնպէս համալ, որ ամէնքը կը դմայլին»:

Սուլթանը հրաման կ'ընէ եր փառային ըսա- ծին պէս պաղպաղակ բերուի:

Սիմոն կ'ըսէ թէ՛՝ «Տէր Արքայ, լիմոն կաթին հետ եթէ խառնուի, կաթ կը կտրի, կաթի համ տուղ սրիշ բան մը ըլլալու է»:

Փառան կ'ըսէ. «Ո՛ր, ես լաւ գիտեմ որ կաթ է»:

Սուլթանը կ'սպառնայ. «Եթէ Սիմոնը չկրնայ շինել, ջեբ solisnurifanին բերէք, Սիմոնին տեղը կ'անցընեմ. ութ օրէն բերէ՛ք»:

Սիմոն կայծակնահար եղած էր. լիմոնը կաթը իրար կը խառնէր, կաթը կը կտրէր. կաթը կ'եփէր եւ ուրիշ ի՛նչ փորձեր որ կ'ընէր, անօգուտ կ'ըլլար. նորէն կաթը կը կտրէր. օրերը կ'անցնէին. ութ օ- րէն փառան կրկին պիտի դար եւ solisnurifanին ալ հետը պիտի բերէր:

Սիմոնի ինզճ աշկրտները շինուած ու արուած պաղպաղակները թափելէն գրիթէ զղուած էին եւ մէկ օր մտացած էր փառային գաւուն: Սիմոն կ'ըսէր. «Վերջին փորձ մ'ալ ընեմ: Տղաք, լիմոնը եւ կաթը զատ զատ կէս սառած վիճակի մէջ իրար խառնե- ցէք ու դարձուցէք, տեսնե՛նք ի՛նչ կ'ըլլայ»:

Սիմոն յաջողած էր եւ լիմոնախառն կաթով պաղպաղակը գոյուլթիւն առած:

Սիմոնի տիրութիւնը ու շուարբուր վերջացած,
յաջորդած էր տարօրինակ ուրախութիւն մը:

Վերջին օրը Սիմոն առտուն կանուխ արթնցաւ.
վազեց ուղղակի Ելէտըզ, ամենաընտիր կովին իւզա-
լից կաթը քամել տուաւ, կայսերական պարտեզէն
Թարմ ընտիր լեմոններ բերել տուաւ եւ իր ուղած
ձեւով պատրաստեց իր ձեռքովը լեմոնախառն կա-
թով պաղպաղակը:


Քիչ ետքը Յոյն վաշան իր Յոյն ծառային հետ
եկաւ:

Սուլթանը հրաման կ'ընէր ուղուած պաղպա-
ղակը բերել, արդէն Սիմոն ամէն ինչ պատրաստած
էր եւ իր ձաշակով լեցուց ու ինքը անձամբ տա-
րաւ անօրինակ գուարթութեամբ: Սիմոն չը մոռ-
ցաւ իր արհեստակցին ալ լեցուն գաւաթ մը զրկել,
որ զարմանքով կը տեսնէր եւ չէր ուզեր հաւատալ
թէ՝ գաղտնիքը գիտցուած է:

Սուլթանի Համիտ պատուանշանով մը պատուեց
Սիմոնը, բայց տարիներ ետքը 1896 ին թշնամու-
թեան մը զոհուեցաւ, որպէս թէ՛ իր ծառաներուն
ըսած ըլլայ թէ՛ «տեսէ՛ր անգլիական զբահաւոր-
ները ներս կը մտնեն»):

Խեղճ Սիմոն, կը վտարուի Ելէտըզէն, բայց
յետոյ Սուլթանի Համիտ նկատի առնելով անոր
ծերբացած վիճակը, հանգստեան Թոշակ մը կապել
կը հրամայէ:

ՎԱՀՐԱՄ՝ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՐԿՏՈՂԵԱԿՆԵՐ



Նոյն խրմուրէն ստեղծուեցան ամէն մարդիկ նոյն սիպար,
Եղբայրներ ենք մենք բախտակից, սիրե՛նք ամենքս զիրար:
Եղի՛ր ասոյ դու շառուքեան. արգահասո՛ղ բայց չարին.
Նա մայրեալ մ'աւ հիւանդ մ'է, բուժէ՛ր քերես զայն
բարին:

Անկեղծ եղիր, հեմարիս մարգ, խօսքդ արհիլ արձագանգ.
Կեղծոյ մարդը սին սսուեր մ'է, ո՛չ մարդ, մարդու
լոյ պատրան:

Պատուոյ վրայ դու գուրգուրա՛ գերջ քանկազին մի
գոհար.
Թէ կորուսես զայն, կրկին ձեռք անցունելն է քա՛ս
դժուար:

Աւխասուքեամբ օր կը կարնի, կեանքը սակայն
կ'երկարի.

Այն ասեմ մարդ կ'ազատագրի, երբ որ անոր է գերի:
Տե՛ս քէ ի՛նչպէս բընութեան մէջ կարգով կ'երթայ
ամէն բան.

Զըվեւոր՝ ձիւն, գարնան՝ ծաղիկ, հունձին՝ ամառին,
միրգն՝ աւանն:

Ժառանգութիւնը մեծագոյն զոր մարդ քողու իր գաւկին՝
Ուրիղ մարդու, պարկեօս անձի մաբուր անունն է անգին:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ




**Տ. ԴԱՆԻԷԼ
Ս. ԱՐՔԵՊԻՍԱԿ
ՅԱԿՈԲԵԱՆ**



Բարի, հեղաճամբայր, վիհան ձն եկեղեցական մըն էր Դանիէլ Սրբազան, զոր կորուսինք վերջացող տարւոյն մէջ: Անոր հայու հոգին արատ չուներ բընաւ եւ միշտ պատրաստ էր ծառայել բարոյանուէր եւ հաւատարմօրէն իր հօտին, որուն ազգային բարիբաւոթեան համար խորին հաւատք մը կը տածէր: Այդ հաւատքը անսասան մտաց իր մէջ մեր ցեղին անուար աղէտներու պահուն իսկ եւ իր նայուածքը պայծառ հորիզոններու յառած մտաց միշտ:

Հոգեւոր օրհներգութիւններու եւ անուշարար խօսակերտ մէջ սանօղ իր կեանքը մտքուր՝ պիտի վայելէ անապոհելիս աշուհ հետեւ անվտանգներան թիւններ: Ահա իր զարձրն արժանաւար:

Այս առթիւ սրտագին կը մաղթեմ երկար կեանք երուող մի Ս. Յակոբեանց Միաբանութեան՝ որուն կը վերաբերէր Դանիէլ Սրբազան, եւ անոր սիրովոսելի Պետին:



ՌԱՓԱՅԷԼ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Բարեգործ եւ ազգասէր հայ, մեաւ անցիտ տարւոյ Յուլիս Գնն ի Բարիզ:

Միխններ կտակեց Ազգին, լիաբուռն նուիրեց մեր պէտքերու ու կարողութիւններուն:

Յարգանքով պէտք է խոնարհիլ այս մեծանձն հանգուցելոյն յիշատակին առջեւ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

**ԸՆՏԻՐ
Ա Ղ Ջ Կ ՈՒ Ն Ք**

Գրեց
ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Մանկական կեանքի քերեցիկ դրուազները, ապրուած օրերու սքանչելի օրինակներ կը ներկայացունին այս հատորիկիս մէջ, սիրուսն գրչով Յարգելի գրագէտ Տիար Միհրան Յովհաննէսեանի, որ բանաստեղծութեան, բանասիրութեան եւ մանկավարժութեան մէջ հետզհետէ նոյն ոգին ցոյց կուտայ հրատարակելով իրական կեանքի նուազներ, գրական համբաւներ եւ անոնց իրական արժանիքը եւ բնօրէն աղջկանց իրական պատմութիւններ:

Ահաւասիկ բարոյացուցիչ ընտիր մատենիկ մը, արժանաւոր յարգանք հեղինակին վաղամեռնիկ քրոջ յիշատակին, միեւնոյն ատեն ախորժով կարուացուելու գործ տէն հասակի մարդոց, մանաւանդ մեր նորահաս սերնդեան համար: Գին 25 զրշ.:

Վաճառման կեդրոնատեղի՝ Կ. Պոլիս, Չաքմաբ-ձըլար, Թիւ 50

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԻԱՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԱՏԱՄՆԱՌՈՅԻ

ՏՈՔԹ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ

ԲԵՐԱ, ՔԻՒՉԻՒՔ ԲԱՐՄԱՔ ԳԱՐՈՒ
Ճարտար եւ խղճամիտ սպասարկութիւն

Պ. ՎԱՀՐԱՄ ԿԱՐՄՐՈՒԿԵԱՆ
V. GARMROUGUIAN

14, RUE TAITBOUT PARIS (IX)
Հեռագրական հասցէ՝ ARARAT-PARIS
Հեռաձայն՝ BEAGÈRE 50-62

Առեւտրական, ճարտարարուեստական եւ կամ օրեւէ գործի համար դիմեցէք վերի հասցէին եւ գոհ պիտի մնաք: Տարիներու փորձառութիւն եւ ուղղամտութիւն Տիար Վ. Կարմրուկեանի գործերը կերպին վրայ մեծ հաւատք կը ներշնչեն իրաւամբ:

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ
ԵՐԿԱՍՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Սփոփանք Ռամկին 1888	20
2. Իրական կեանքի նուազներ 1892 եւ 93	20
3. Բնարիկ 1895	5
4. Բնական պատմութիւն ժթ. հայ դպրութեան 1901	100
5. Նոր քերական Ֆրանսերէն լեզուի 1922	15
6. Գրական համբաւներ 1909	40
7. Բառարան Ֆրանսահայ 1911	125
8. » Հայ-Ֆրնս. 1912	—
9. Տեղեկագիր ազգ. կալուածոց Տիվրիկի 1910	80
10. Չնոր Գլակ հանդէպ արդիական քննադատութեան 1912	60
11. Սկզբունք Գրո. Տնտես. 1911	25
12. Հայ-Ֆրնս. զրուցատրութիւն	30
13. Անգլիերէն »	30
14. Ընտիր աղջկունք	25

ԳՐԱՏՈՒՆ
ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

50, Չափաւսֆաղար, Աղբիւրիկ նոս, 50

Կ. ՊՈԼԻՍ



LIBRAIRIE
SIMON CAPAMADJIAN

50, Tchakmakdjilar, près de la Fontaine

CONSTANTINOPLE

